ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«09» «հոկտեմբեր» 2021 թ. № 246-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 107-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մարտի 24-ի «Շրջակա միջավայրի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» N 107-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

1) Հրամանի 13-րդ հավելվածի 7-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) Համակարգչային տեխնիկայի սպասարկման բաժին,

ա. իրականացնում է ներքին ցանցի աշխատանքների կազմակերպումը և սպասարկումը,

բ. իրականացնում է սերվերների կառավարումը, տվյալների արխիվացումը և համացանցային կապի ապահովումը,

գ. իրականացնում է համակարգչային տեխնիկայի ծրագրային սպասարկումը և շահագործումը,

դ. ուսումնասիրում է կանոնադրությամբ Բաժնին վերապահված իրավասությունների սահմաններում Կառավարության նիստերի և նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերը և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ կազմում տեղեկանքներ,

ե. մշակում է Բաժնի աշխատանքային ծրագիրը և Բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները:»,

2) Հրամանի 14-րդ հավելվածի 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9.1-ին ենթակետով.

«9.1) Նախարարության պաշտոնական կայքի կառավարումը,»:

ՆԱԽԱՐԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

7/9/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«09» հուլիսի 2021թ.
ք. Երևան